ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԻ ՎԵՐԵԼՔՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ XI—XIII ԴԱՐԵՐՈՒՄ

Հ. Դ. ԹՈՒՐՇՅԱՆ

Պահլավունիները մեծ և անվանի տոհմ էին Բագրատունիների օրով։ Նրանց ծագման և առանձին ճյուղերի պատմությունն արժանի է հատուկ ուսումնասիրության։ Այստեղ մեզ հետաքրքրում է միայն մագիստրոս տիտղոսով հայտնի Գրիգոր Պահլավունու ճյուղը։

Դեռևս Անիի անկումից առաջ Գրիգոր Պահլավունին, մագիստրոս զինվորական տիտղոսով, Բյուզանդիոնի կողմից կարգվում է Վասպուրականի, Տարոն-Տուրուբերանի և Աղձնիքի բդեշխ։ XI դարի կեսերին նա Հարավային Հայաստանում դաժան պայքար էր մղում թոնդրակեցիների դեմ։ Նրա կենդանության օրով և մահվանից հետո (1058 թ.) որդին՝ Վահրամը, հոր օգնականն էր և ապա՝ հաջորդը։ Ինչպիսի հաջողությամբ որ հայր ու որդի կռվում էին թոնդրակեցիների դեմ, նույնպիսի հաջողությամբ չկարողացան նրանք կռվել սելջուկ թուրքերի դեմ, որոնք արդեն մտել էին Հայաստան։

1065 թ., Կապադովկիայում մահվան դատապարտված Բագրատունիների և Արծրունիների փոխադարձ համաձայնությամբ, Գրիգոր Մագիստրոսի վերոհիշյալ որդին՝ Վահրամը, Գրիգոր (նաև Գրիգորիս) անունով հայոց կաթողիկոս է կարգվում։ Պահլավունի կաթողիկոսը, որ հայոց պատմության մեջ մտել է «Վկայասեր» անունով, հակառակ իր այդ մականվան, ինչպես աշխարհիկ և զինվորական մարդ էր նախքան կաթողիկոս դառնալը, այնպես էլ աշխարհիկ մարդ մնաց իր նոր, հոգևոր պաշտոնում։ Այդ խառն, հեղհեղուկ ժամանակաշրջանում նրա աթոռը գաղթում էր դղյակից-դղյակ (Ծովք, Թավբլուր, Շուղր), մինչև որ հաստատվեց Հռոմկլայում (Կալա ի Ռում)՝ Հայաստանի սահմաններից դուրս։ Կաթողիկոս դառնալով՝ Վահրամ-Գրիգոր Պահլավունին շատ մեծ գործունեություն ծավալեց։ Այդ ժամանակ մի քանի հայ կաթողիկոսություն կար։ Նա իր և իր տոհմի հեղինակությամբ կարողացավ թե՛ հայ բընորրանից և թե՛ այդ ժամանակ վերընթաց կյանք ապրող հայկական Կիլիկիայից դուրս գտնվող Հռոմկլան դարձնել ամենայն հայոց կաթողիկոսարան և հայ մշակույթի ու քաղաքական կյանքի մի նոր օջախ։ Նա կարողացավ ամենայն հայոց կաթողիկոսությունը շուրջ մեկուկես դար (1065—1203 թթ.) դարձնել իրենց տոհմի անկապտելի սեփականությունը։

Պահլավունիների տոհմն այդ ժամանակաշրջանում տվեց յոթ նշանավոր կաթողիկոս, որոնք «երկայնաձիգ գաւազանաւ» կառավարում էին աշխարհասփյուռ իրենց «հոտը»։ Այդ 138 տարիների ընթացքում այնքան մեծ հեղինակություն ձեռք բերեց Պահլավունիների անունը, որ նրանց հետ խնամիացող անդամ հին անվանի տոհմերի զարմերն սկսեցին Պահլավունի համարել իրենց։ Այնքան, որքան հայոց կաթողիկոսներն ընտրվում էին կուսակրոն հոգևորականությունից, այդ տոհմն իր գոյությունը պահպանեց միայն վերոհիշյալ խնամիական կապերով ճյուղավորվելու շնորհիվ։ Եգիպտահայության ա-

ռաջին կաթողիկոս Գրիգորը, նրա եղբայրներ Վահրամն ու Վասակը, Պահլավունիներ էին Ապիրատների տոհմից։ Ներսես Շնորհալի մեծ բանաստեղծը, որ կաթողիկոս դարձավ, նույնպես Պահլավունի էր Ապիրատների գծով։ Իրենց Պահլավունի էին համարում նաև այդ տանը փեսայացած այն հայ իշխանների զարմերը, որոնք մնացել էին անառիկ Սասունում և սերում էին Զորտուանելից, որին ընդունված է Մամիկոնյան համարել։

Դեռևս Գրիգոր Մագիստրոսի հոր զորամասում կար Զորտուանել անունով մի զինվորական։ Այս զինվորականը կռվում էր նաև Մագիստրոսի բանակում և այդ բանակի հետ անցել էր Տարոն։ Ընդհանուր նահանջի տարիներին նա մնում է անառիկ Սասունում և նրա սերունդները, պարբերաբար կրկնելով Զորտուանել անունը, նաև պարբերաբար խնամություն են հաստատում Պահլավունիների Հռոմկլայի տան հետ։ XII դարի վերջին երկու տասնամյակներում Սասունում կային երկու տարբեր Զորտուանելների որդիներ, որոնք Գրիգոր Գ և Գրիգոր Տղա Պահլավունի կաթողիկոսների քույրերի որդիներն էին։ Այս երկու Զորտուանելների մասին Հրաչյա Աճառյանի «Անձնանունների բառարանում» կարդում ենք.

«Զորտուանել Գ որդի Վիգեն իշխանի Սասնոյ, թոռն Զորտուանել Բ-ի, ամուսնացավ Գրիգորիս Գ կաթողիկոսի Վասիլ եղբոր Վանինի անուն աղջկա հետ. իր որդիքն են Վասիլ, Շահնշահ և Թոռնիկ. մեռավ երիտասարդ հասակում 1165 թվ. և թաղվեց Վանգիր վանքում («Թորոս Աղբար», Բ, 311—4, «Հայապատում», 391—4, Հնութ. Ակնայ, 77)։

Ճորտուանել. իշխան Սասնոյ, որի որդիքը՝ Հեթում և Շահնշահ գաղթեցին Կիլիկիա 1189 թվին և խնամացան Լևոն Բ-ի հետ, ամուսնացած էր Գրիգոր (Տղա—Հ. Թ.) կաթողիկոսի քրոջ հետ (Սմբատ պատմ. 105)»[1]։

Այսպիսով, Գրիգոր Մագիստրոսի սերնդի Պահլավունիները պարբերաբար խնամիանալով Սասունում մնացած Զորտուանելների և Կիլիկիայի սահմանները հասած Ապիրատների հետ, կազմում են աշխարհիկ ու կրոնական գործիչներ տվող մի տոհմակցություն, որը թեև անվանի էր դարձել իր տված իրոք մեծ կաթողիկոսների հեղինակության ու հռչակի շնորհիվ, բայց բավականաչափ հող ու գործունեության հնարավորություններ չէր կարողանում ընձեռել այդ ծավալուն տան աշխարհիկ անդամներին, որոնք նույնպես աչքի ընկնող դեմքեր էին։

* * *

Սելջուկյան արշավանքների ճնշման տակ հայ ժողովուրդը ինչպես դեպի հյուսիս, այնպես էլ դեպի Սիրիա ու Կիլիկիա գաղթեց կամ, ավելի ճիշտ, շարժվեց կազմակերպված, հոծ զանգվածներով։ Տեղահանություն գլխավորող մեծ ու փոքր նախարարների զինվորական ուժը դեպի հարավ-արևմուտք շարժվելու ընթացքում գնալով ավելի էր մեծանում։ Եթե Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների պայմաններում կենտրոնախուսության և նստակյաց համեմատաբար բարեկեցիկ կյանքի պատճառով հայ նախարարներին դժվար էր լինում զորական շոշափելի ուժեր հավաքագրել, ապա տարագրության այդ ժամանակաշրջանում տնից-տեղից, նստակյաց բարեկեցիկ կյանքից կտրված թե՛ հայ ազատը, թե՛ շինականը և թե՛ արհեստավորը կամա-ակամա պետք է բոլորեին

[1] Հ. Ա. Ճ ա ռ ա յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, Դ, էջ 215—216։

նույնպես տարագիր հայ նախարարների շուրջը՝ շոշափելի զինվորական ուժ ստեղծելով նրանց ձեռքի տակ։ XI դարի երկրորդ կեսին, նախքան Ռուբինյանները կբարձրանային Կիլիկիայում, դաղթի, նահանջի, տարագրության այդ պայմաններում Պահլավունիները տեր դարձան Անտիոք մեծ քաղաքին, իսկ հունական ծառայության մտած վասպուրականցի քաղաքագետ Փիլարտոս Վարաժնունին,— երբ հունաց կայսրը գերի է ընկնում Մանազկերտում (1070 թ.),— մեծ թագավորություն կազմակերպեց Մարաշում (Կիլիկիա)։

Այդ նույն ժամանակ Փիլարտոսի նման չի վարվում Սիրիա հասած առերևույթ կրոնափոխ մի ուրիշ հայ զորավար, որին արաբ պատմագիրները Բադր են անվանում։ Օտարության մեջ զինվորական ծառայությունից բացի ապրուստի այլ միջոց չունեցող կամ թե այդ խառն ժամանակներում օտարի դռներին ինքնապահովության համար զորեղ ու ճարպիկ տեր որոնող յոթ հազար քրիստոնյա հայեր էին բոլորել առերևույթ մահմեդականություն ընդունած այդ զորավարի շուրջը։ Եվ նա այդ զինվորական ուժով պահակային ծառայության է մտնում հարուստ Եգիպտոսի Ֆաթիմյանների մոտ։

Յոթ հազար հայ զորքով Եգիպտոսին ծառայության մտած Բադրին Ֆաթիմյանները 1063 թ. նշանակում են Դամասկոսի կայազորի պետ, ապա փոխադրում են Աքքա նավահանգիստը և նրան են հանձնում նաև ծովակալության պաշտոնը։ Հետագայում նա դառնում է Ֆաթիմյանների մեծ վեզիր։

Եգիպտոսում մեծ դիրքի հասնելուց հետո Բադրը շարունակ մտածում էր լրացուցիչ հավատարիմ զորք և հենարան ունենալու մասին։ Այս նպատակով նա կապվում է հարավից Եգիպտոսին սահմանակից Նուբիայի հետ, որտեղ քրիստոնեությունը վաղուց մուտք էր գործել և որի Սողոմոն թագավորը քրիստոնյա էր։ Նա Սողոմոնին իր մոտ է հրավիրում և փառավոր ընդունելություն ցույց տալիս նրան։ Հավատարիմ նեցուկի հարցը շարունակ լրջորեն ծառացած էր Բադրի առջև՝ չէ՞ որ իր քրիստոնյա զորքը ծերանում էր։ Հարկավոր էին փոխարինողներ, հարկավոր էր ունենալ նոր համալրում։ Բադրը հղանում է իր դարավոր հայրենիքը լքող և լքելու տրամադիր հայ ժողովրդին ամբողջությամբ Նեղոսի ափերը փոխադրելու միտքը։ Այդ ժամանակ, հայության առաջին մեծ արտագաղթի այդ դարաշրջանում, Գրիգոր Վկայասեր Պահլավունի կաթողիկոսը, հակառակ իր «վկայասեր» կոչմանը՝ զուտ աշխարհիկ մի մարդ, Գեորգ Լոռեցուն կաթողիկոսի տիտղոսով իրեն աթոռակից թողնելով Տավրոսյան լեռներում (հայրապետական աթոռը, ինչպես ասացինք, դեռևս հաստատուն վայր չուներ և նախքան Հռոմկլայում հաստատվելը ապավինում էր մեկ Շուղր, մեկ Ծովք, մեկ Թավբլուր դղյակներին), 1069 թ. գնում է Անի, ապա անցնում է Բյուզանդիոն, Հռոմ՝ իր ցրված հոտին սպասարկելու համար և, ամենայն հավանականությամբ, հրավեր ստանալով Բադրից, հետևորդների մեծաթիվ շքախմբով Հռոմից նավարկում է Եգիպտոս։ Կաթողիկոսին ուղեկցողները զգեստավորված ափ են իջնում ու ներկայանում խալիֆին։ Խաղաղասեր խալիֆը, որն արդեն գտնվում էր հայազգի մեծ վեզիրի ազդեցության տակ, փառավոր ընդունելություն է կազմակերպում ի պատիվ հայոց կաթողիկոսի և անձամբ նավամատույց գնալով, շնորհավորում է Գրիգոր Վկայասերի գալուստը (1082 թ.)։ Խալիֆը մի քանի տարի հայոց կաթողիկոսին հյուր է պահում Կահիրե և «յոգնակի խօսակցութեամբ» նրան համոզում է առհասարակ մնալ Եգիպտոսում և իր աթոռը հաստատել այնտեղ։ Գրիգոր Վկայասերը մերժում է խալիֆի խնդիրքը՝ պատճառաբանելով, որ չի

կարող անտեր թողնել իր հոտը երկրում և մնալ Եգիպտոսում, որտեղ ինքը հոտ չուներ («դնէր և այլ պատճառս բանի յաղագս ոչ լինելոյ անդ յազգէն Հայոց՝ ունայն զհովուելն իւր»[2]։ Իսկ խալիֆը խոստանում է իր երկրի դռները լայնորեն բաց անել հայության առաջ և երկիրը լցնել հայերով, միայն թե ամենայն հայոց կաթողիկոսը մնար իր երկրում («իսկ նա բառնայր զպատճառանս և երդմամբ հաստատէր լնուլ զաշխարհն Հայաստանեայց աղգօք, զոր և արար իսկ, և բազմացոյց անդ բազմութիւն յոյժ»[3]։

Գրիգոր Վկայասեր Պահլավունի կաթողիկոսը տեսնելով, որ հայ ժողովրդի համար այդ «դառն և դժնեայ» օրերին, երբ արդեն շուրջ երեսուն հազար հայ (կամ հայ զորք) կար Եգիպտոսում, նպատակահարմար չէ իսպառ մերժել պանդխտող հայերի նկատմամբ բարյացակամություն ցուցաբերող օտար իշխանավորին, որոշում է ընդառաջել խալիֆի խնդիրքին, և իր քրոջ որդուն՝ նույնպես Գրիգորին, որ շրջագայում էր նրա հետ, ձեռնադրում է եպիսկոպոս և եգիպտահայության հովիվ է կարգում կաթողիկոս տիտղոսով (1084 թ.), իսկ ինքը, Գրիգոր Վկայասերը, որի աշխարհիկ անունը Վահրամ էր, վերադարձին հավաքում է իրենց տոհմի աշխարհիկ անդամներին, իր կրտսեր քեռորդուն վերանվանում է Վահրամ և Պահլավունիների տան նահապետ կարգելով, մատնացույց է անում Եգիպտոսի ճամփան, մանավանդ նրա հարավը, որը սահմանակից էր այդ ժամանակ դեռևս քրիստոնեական Նուբիային։ Վահրամ ու Վասակ Պահլավունիները, ըստ արաբ պատմագիրների, քսան հազար հոգով գնում են Եգիպտոս, որտեղ Վահրամը կարգվում է Ռուսի (Կուշի) նահանգապետ՝ երկրի հարավային մասում։

1130 թ. մեռնում է Ամիր խալիֆը։ Իրեն խալիֆ է հռչակում Բադրի որդու՝ Շահնշահի չցանկացած թեկնածուն՝ Հաֆիզը։ Շահնշահի որդին մեկ ամբողջ տարի կարողանում է թույլ չտալ, որ Հաֆիզը գրավի գահը։ 1131 թ. Հաֆիզը, որ Ֆաթիմյան դինաստիայի ամենանշանավոր խալիֆներից մեկը պիտի դառնար, վերջնականապես հաստատվում է գահի վրա։ Նա գիտակցում էր առևտրա-արդյունաբերական և արհեստագործական խաղաղ գործունեությունն ծավալող հայերի ներկայության անհրաժեշտությունն իր երկրում. սակայն նոր խալիֆի հետ իշխանության գլուխ անցած պաշտոնատար անձանց կողմից սառն վերաբերմունք է նկատվում հայերի նկատմամբ։ Բայց երկրի հարավում, քրիստոնեական Նուբիային սահմանակից Գուս (Կուշ) նահանգում, իր հայ զորքով ուժեղացել էր Վահրամ Պահլավունին, որը համառորեն հավատարիմ էր մնում իր քրիստոնեական կրոնին և պահպանում էր եգիպտահայության շահերը։ Տեսնելով հայերի նկատմամբ մայրաքաղաքում վերստին ստեղծված անբարյացակամ մթնոլորտը, Վահրամ Պահլավունին, չնայած իր ծեր հասակին[4], 1134 կամ 1135 թ. հայ զորքով շարժվում է Կահիրեի վրա, գրավում մայրաքաղաքը, սպանում ու փախուստի է մատնում իր հակառակորդներին։ Հաֆիզ խալիֆը հարկադրված մեծ վեզիրի խիլան (շքազգեստը) հագցնում է Վահրամ Պահլավունուն, որն անմիջապես երկրի բոլոր

2 Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 351։

3 Նույն տեղում։

4 1094 թ. Պահլավունիների տան նահապետը, որը պետք է գլխավորեր 20 հազար հայերի տեղափոխությունը Եգիպտոս, եթե 30-ամյա լիներ, ապա 1134—1135 թթ. 70-ամյա ծերունի կլիներ։

հրամանատարական բարձունքները հանձնում է մոտ երկու հազար հայ պաշտոնյաների։ Այս դրությունը տևում է ավելի քան երեք տարի։ Հայկական այս գերուժությունն ընդհանուր դժգոհություն է առաջացնում Եգիպտոսում։ Խալիֆը՝ մարգարեի հաջորդը, աղոթքի պահին անտեսանելի պիտի մնար հավատացյալների աչքից։ Ըստ ընդունված կարգի՝ մզկիթում խալիֆին ծածկող վարագույրը քաշում էր մեծ վեզիրը։ Քրիստոնյա վեզիրն այդ բանն անել չէր կարող։ Ավանդական կարգի խախտումը վրդովում է մահմեդականներին։ Իրադրությունից օգտվում է Ռյուդվան Վալախշի անունով գավառական մի էմիր, որն ապստամբություն է բարձրացնում մահմեդական կրոնի ոտնահարված իրավունքները վերականգնելու դրոշով և մաքրակրոն բեդուինների գլուխ անցած՝ հարձակում է գործում «պղծված» Կահիրեի վրա. կառավարական զորքի մահմեդական զորաբաժինները վճռական ճակատամարտի պահին անցնում են Վալախշիի կողմը։ Վահրամն իր հայկական զորքով հարկադրված նահանջում է (1137 թ.) և գնում երկրի հարավը, որտեղ մահմեդականներին հաջողվել էր մինչ այդ սպանել նրա եղբորը՝ Վասակին (Բասակին)։ Այստեղ, եղբոր սպանության վրեժն առնելով, Վահրամը գնում է ավելի հարավ։ Վահրամ Պահլավունին նորից իր զորքով շարժվում է Կահիրեի վրա։ 1140 թ. նա կրկին անգամ գրավում է մայրաքաղաքը, պատժում Վալախշիին, վերականգնում հայերի բոլոր իրավունքները և, որպես խաղաղության ու ապահովության երաշխիք, երկրի մայրաքաղաքում ստեղծում է պետությունից ռոճիկ ստացող հայկական մշտական նատուկ զորք։ Այդ հայկական զորքը շարունակ համալրվելով, իր գոյությունը պահպանում է ամբողջ 32 տարի և պարտության է մատնվում ու վերացվում միայն Սալահեդդինի ձեռքով, երբ նա ֆաթիմյանների վեզիր դառնալուց (1169 թ.) հետո պետական հեղաշրջում է կատարում և իր հոր անունով Այյուբյան քրդական դինաստիա հիմնում Եգիպտոսում (1172 թ.)։

XI և XII դարերի եգիպտահայ ստվարաթիվ ու բարգավաճ գաղութը, ինչպես նաև եգիպտական ընդհանուր կյանքում հայ վեզիրների և այլ մեծամեծների գրված կարևոր դերքերը և խաղացած էական դերն այնպիսի նշանավոր երևույթ էին արդեն օտար հորիզոնների տակ նոր հայրենիքի որոնման դատապարտված հայ ժողովրդի համար, որ ժամանակի հայ մատենագրությունը չէր կարող չանդրադառնալ եգիպտահայ գաղութին։

Ժամանակի տեսակետից առաջին հայ պատմագիրը. որը խոսում է եգիպտահայ գաղութի մասին, Մատթեոս Ուռհայեցին է, որն իր «Ժամանակագրութիւնը» հասցրել է մինչև 1134 թ.։ Ուրիշ խոսքով՝ նրա կենդանության օրով են Եգիպտոսի մեծ վեզիր դարձել Բադրը (1074—1094) և Շահնշահը (1094—1121), որոնք առերևույթ մահմեդականություն էին ընդունել։ Ուռհայեցին երիտասարդ քահանա էր հայկական Եդեսիա (Ուռհա) քաղաքում, երբ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն ուղևորվեց Եգիպտոս (1082—1084)։ Բարեպաշտ հայ քահանան հականե-հանվանե խոսում է միայն Վկայասեր կաթողիկոսի հիշյալ ուղևորության և այնտեղ հայկական ուրույն կաթողիկոսություն հիմնելու մասին։

Ըստ Ուռհայեցու Գրիգոր Վկայասեր Պահլավունի կաթողիկոսը բավական երկար ժամանակ է մնացել Կահիրեում, որոշ ժամանակ իր աթոռն է հաստատել այնտեղ և «կանգեալ անդէն նորոգեաց զամենայն կարգ սուրբ

եկեղեցւոյ», իսկ իր քրոջ որդուն Եգիպտահայության կաթողիկոս է ձեռնադրել «զկնի ժամանակաց»[5]։

Հավանական չէ, որ Մատթեոս Ուռհայեցուն հայտնի եղած չլիներին Գրիգոր Վկայասեր կաթողիկոսին Եգիպտոս հրավիրող հայազգի վեզիր Բադրի ու նրա որդու՝ Շահնշահի անունները, ինչպես նաև եգիպտահայ գաղութի արագ ստվարացումն ու բարգավաճումը, որ տեղի էր ունեցել նրա օրով, մանավանդ որ նրա քաղաքից՝ Եդեսիայից էր Բադրը հայ արհեստավորներ և ճարտարապետ Հովհան կրոնավորին տարել Կահիրե՝ քաղաքի երկրորդ պարիսպը և այլ շինություններ կառուցելու համար։ Բայց, իբրև բարեպաշտ քահանա, բարվոք է համարում չխոսել հայ եկեղեցին ուրացողների մասին, ինչպիսի դիրքի էլ հասած լիներին նրանք օտար միջավայրում։

Ժամանակի տեսակետից եգիպտահայ գաղութի մասին խոսող երկրորդ հայ հեղինակը մեծատաղանդ Ներսես Շնորհալին է (1101—1173)։

Մատթեոս Ուռհայեցու կենդանության օրով Եգիպտոսի հայ վեզիրներն առերևույթ իսլամ ընդունած Բադրն ու Շահնշահն էին։ Ուռհայեցին քրիստոնեությանը հավատարիմ մնացած Վահրամ Պահլավունու բարձրացումը չտեսավ (Ուռհայեցին վախճանվել է հավանաբար 1134 կամ 1135 թ., այնինչ Վահրամ Պահլավունու վերելքն սկսվում է 1135 թ.)։ Իսկ Շնորհալին ոչ միայն տեսել է, այլև, որպես տոհմակից, ապրել ու ոգևորվել է իր հարազատ հորեղբոր այդ վերելքով և իր «Յիշատակարաններում» երգել է Վկայասեր կաթողիկոսի և Ապիրատ-Պահլավունի զորավարների սխրագործությունը։

Սակայն եգիպտահայ գաղութի մասին չէին կարող չգրել նաև բուն այդ գաղութի ծոցում սնված ու դաստիարակված հայ պատմագիրները։ Պատմությունը պահել է դրանցից միայն մեկի՝ Աբու Սալիհ ալ-Արմանիի անունը, որն ապրել է XII դարի երկրորդ կեսում և XIII դարի առաջին քառորդում։ Այդ պատմագրի «Պատմութիւն վանօրեից և եկեղեցեաց Եգիպտոսի» աշխատությունը մեզ է հասել, դժբախտաբար, ոչ ամբողջովին։ Եգիպտոսի հայկական վանքերի, եկեղեցիների և եգիպտահայ գաղութի առանձին նշանավոր անձանց մասին պատմող հատվածները Ալիշանը ծաղկաբաղ թարգմանությամբ ներկայացրել է հայ հասարակությանը («Ապուսահլ-հայ», Վենետիկ, 1895)։

Վերադարձից հետո Վահրամ Պահլավունին, ինչպես տեսանք, կարողանում է վերականգնել եգիպտահայության իրավունքները։ Ավելին. նա նորից կազմակերպում է հայկական ուրույն և մնայուն զորք, որը ռոճիկ էր ստանում պետությունից։

Ներունազարդ Պահլավունին վախճանվում է հաղթության առաջին իսկ տարին։ Նրա փառավոր թաղման նկարագրությունը, որ Դ. Մսրլյանը քաղվածաբար բերում է ժամանակակից արաբ պատմաբան Հասան-իբն-Հասանի «Ալ-Ֆաթիմիուն Ֆի Միսր» գրքից, ինքնին մի պերճախոս ապացույց է Պահլավունու գրված շատ բարձր դիրքի և պետության համար ունեցած հույժ կարևորության։ «Այս առթիվ սաստիկ ցավ զգալով,— գրում է արաբ պատմաբանը,—խալիֆան հրամայեց, որ պաշտոնատուները գոցվին երեք օր։ Ապա կանչել տվավ հայոց պատրիարքը և հուղարկավորության պատրաստություններ տեսավ։ Կես օրվան աղոթաժամը հասած էր, երբ պալատեն դուրս հան-

5 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջմիածին, 1898, էջ 211։

վեցավ նկարագեղ մետաքսով (դիպակ) զարդարուն դագաղը, որ շրջապատված էր բուրվառակիր քրիստոնյաներով։ Հուղարկավոր եղան շերիֆներ (ազնվականներ) և այլ բարձրաստիճան անձնավորություններ հետիոտն։ Ջորի հեծած՝ մեռելական թափորին հետևեցավ նաև Հաֆրզ խալիֆան, որ կը կրէր կանաչ փաթթոց և կանաչ զգեստ։ Բազմությունը շարունակեց իր գնացքը և քահանաներ Ավետարանական երգեր երգեցին, մինչև որ հասան Դեյր-էլ-Խանդաք (Խրամատի վանք), ուր վար իջավ խալիֆան, նստավ գերեզմանին եզերքը և սաստիկ լացավ»[6]։

Նեղոս գետի հարուստ հովտում կարգը պահպանելու և միջազգային առևտրի համար նորմալ պայմաններ ապահովելու նպատակով Պահլավունիների ստեղծած հայկական զորքը շարունակական համալրման կարիք ուներ։ Ի դեպ, Մատթեոս Ուռհայեցին, ինչպես տեսանք, խոսելով Եգիպտոսում հայոց կաթողիկոսություն հիմնելու անհրաժեշտության մասին, բերում է Եգիպտոսի ոչ թե հայ բնակչության, այլ հայ զորքի թիվը («Եւ բազում զորք ժողովեցան յԵգիպտոս իբրև երեսուն հազարաց»)։

Ուսամա իբն Մունկիզը,— որի Եգիպտոսում, Ֆաթիմյանների մոտ անցկացրած տարիները (1146—1154) զուգադիպում են Կահիրեում կենտրոնական կառավարության անմիջական տրամադրության տակ գտնվող հայկական զորքի գոյության (1140—1172) ժամանակաշրջանին,— Եգիպտոսի զինված ուժերի մասին խոսելիս տալիս է նրանց էմիրների անունները՝ այսինչ էմիրի զորքը կամ մարդիկ։ Սակայն նա տեղ-տեղ հիշատակում է նաև «Մսրա զորքը» առանց էմիրի անունը տալու։ Այսպես, 1154 թ. պալատական դավերի ու սպանությունների ժամանակ, երբ վերջիվերջո դրության տեր և մեծ վեզիր դարձավ Թալայը իբն Ռուզիկ ալ-Արմանին, քաջ ու խիզախ զինվորական համբավ ունեցող Մունկիզը բարվոք է համարում թաքստոցից դուրս չգալ և իրադարձությունների ընթացքի մասին տեղեկություններ ստանալ մի հայի միջոցով։ Ահա թե ինչ է գրում նա.

«Պալատում ավելի քան հազար մարդ կար Մսրա զորից, և հանկարծ, մեզ համար միանգամայն անսպասելի, մարդկանց մի մեծ խումբ դուրս եկավ դահլիճից և լավեց մեկ մարդու դեմ ուղղված սուրերի շաչյուն։ Ես իմ հայ ծառաներից մեկին ասացի՝ «Տե՛ս, թե ո՞ւմ սպանեցին»։ Նա գնաց և վերադառնալով՝ ասաց. «Նրանք մահմեդականներ չեն»[7]։

Ավելի խաղաղ տարիների մասին, երբ Հաֆիզ խալիֆի մերձավոր անձինք սիրով առյուծի որսի էին գնում, Մունկիզը, նկարագրելով այդպիսի որսերից մեկը, գրում է.

«Մեկ հետ կար մոտ քսան աղեղնավոր հայ։ Առյուծը, որը երեք առյուծներից ամենավիթխարին էր, դուրս եկավ որջից։ Նա եկավ մեզ վրա, և հայերը նետահարեցին նրան։ Ես կանգնել էի հայերի կողքին, սպասելով, որ երբ առյուծը հարձակվի հայերի վրա և բռնի նրանցից մեկին, ես նիզակով զարկեմ նրան»[8]։

Սրանք Վահրամ Պահլավունու կազմակերպած Եգիպտոսի հայ զորքի գոյության հարատևության վկայություններ են։

---

[6] Գ. Մսրյան, Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ, Գահիրե, 1947, էջ 73—74։
[7] Усама ибн Мункизи, Книга Назидания, М., 1958, էջ 63։
[8] Նույն տեղում, էջ 180։

Խաչակրաց արշավանքների դարաշրջանում, երբ արագորեն ընդարձակված սելջուկյան թագավորությունը նույնպես արագորեն մասնատվել էր ու վերածվել փոքրիկ սուլթանությունների և էմիրությունների, երբ Միջերկրական ծովի արևելյան ափերին կազմվել էին խաչակիրների փոքրիկ թագավորություններ և Երուսաղեմը գտնվում էր խաչակիրների ձեռքին (1099—1187), մահմեդական Մերձավոր Արևելքի քրիստոնեական թագավորություններով անջատված Եգիպտոսում բարենպաստ հող էր ստեղծվել հայկական գերուժության համար։ Իհարկե, այդ տիրապետությունն այնպես չէր, ինչպես Միջերկրականի հանդիպակա ափին՝ Կիլիկիայում, որտեղ օրրաստորե արագորեն ստվարանում էր հայ բնակչության թիվը՝ Ռուբինյաններին հաջորդող Հեթումյաններին հնարավորություն տալով հենվելու միայն հայերի վրա և վարելու (վերելքի շրջանում) հայկական քաղաքականություն։ Եգիպտոսի հայ վեզիրները, իրենց ձեռքը կենտրոնացնելով հանդերձ երկրի քաղաքական, ռազմական ու ֆինանսական ղեկավարությունը, այնուամենայնիվ, ի վիճակի չէին հայկական քաղաքականություն վարելու, որովհետև թվական գերակշռությունը նրանց կողմը չէր։ Հենակետի հարցը շարունակ ծառացած էր ինչպես առաջին շրջանի առերևույթ մահմեդականություն ընդունած վեզիրների, այնպես էլ երկրորդ շրջանի Պահլավունի քրիստոնյա վեզիրի առջև։ Թեև նրանց չհաջողվեց դրականորեն լուծել այդ հարցը և ապահովել իրենց համեմատաբար ավելի երկարատև տիրապետությունը, այսուհանդերձ եգիպտահայության վրա հենվող հայ վեզիրները մեծ ծառայման հասցրին երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքը։

Սակայն թուրքական ներխուժման ալիքը հասնում է նաև Եգիպտոս։

1167 թ. Դամասկոսի Զանդյան Նուրեդդինի զուգի թուրքական և քրդական զորքը Շիրքուհի զլխավորությամբ մտնում է Եգիպտոս։ Հաղթական Շիրքուհը դառնում է Ֆաթիմյան խալիֆների մեծ վեզիր։ Մեկ տարի հետո Շիրքուհը մեռնում է և Եգիպտոսի մեծ վեզիրի պաշտոնում նրա տեղը գրավում է նրա եղբորորդին՝ Երիտասարդ Յուսուֆը։ 1171 թ. մեռնում է Ֆաթիմյան Ադիլ խալիֆը, և վեզիր Յուսուֆը 1172 թ. պետական հեղաշրջում կատարելով՝ դառնում է Եգիպտոսի թագավոր։ Այդ հեղաշրջման ժամանակ ջախջախվում է Եգիպտոսի հայ զորքը, որ Ֆաթիմյանների կողմն էր բռնել, ինչպես նաև հիմնավորապես տուժում է հայ բարգավաճ գաղութը, որի թիվն այդ ժամանակ շուրջ հարյուր հազարի էր հասել։

Քանի որ Եգիպտոսի բնակչության համար այդ շրջադարձային պահին հայկական զորքը արաբական և նուբիական զորքի հետ միասին պաշտպանում էր օրինական Ֆաթիմյան դինաստիան, ապա պարտության մատնված հայ զորքը կարող էր նահանջել ոչ միայն դեպի հարավ, այլև դեպի հյուսիս, և Մսրա Մելիքին պատժելու պատրաստվող Զանդյանների երկրով հասնել Սասուն։

Այնքան, որքան անվիճելի փաստ է, որ Վահրամ Պահլավունին XI դարի վերջին տասնամյակին Եգիպտոս անցավ ստվարաթիվ զորքով ու հետևորդներով, իսկ կես դար հետո, 1140 թ., հայկական մշտական զորք հիմնեց այնտեղ, որն իր գոյությունը պահպանեց ամբողջ 32 տարի (մինչև 1172 թ.), ապա մնում է եզրակացնել, որ նա այդ զորքը կարող էր հավաքագրել և հավաքագրում էր առավելապես Սասունում, որտեղ Պահլավունիներն ամուր հենա-

կետ ունեին և որտեղ,— սա շատ կարևոր հանգամանք է,— ռազմիկ ժողովուրդը լեռնային երկրի աղքատության պատճառով դարեր շարունակ վարժվել էր բերդապահ զորք վարձվելու այլ, հեռավոր, անգամ ոչ քրիստոնյա տերերի մոտ. բնականաբար, նրանք իրենց բնիկ տերերի զորապետությամբ այդ միևնույն ծառայությունը սիրով կկատարեին հեռավոր, բայց հարուստ Եգիպտոսում: Սասունում այն ժամանակ կային երկու տարբեր Զորտուանելների սերունդներ. Գրիգոր Դ-ի քրոջ որդիները 1165 թ. կամովին ընդունել էին Խլաթի թագավորի գերիշխանությունը և համակերպվել ստորադրյալի իրենց դրությանը: Մյուս Զորտուանելը և նրա որդիներ Հեթումն ու Շահնշահը, որոնք Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի քրոջ որդիներն էին, ինչ-որ Շահ-ի-Արմենի ենթակա դառնալու տրամադրություն չունեին: Նրանք դեռ չէին համակերպվել հայկական անկախությունը կորցնելու մտքին և սեփական հայրենիքում հայկական անկախությունը պահպանելու համար այդ խիստ աննպաստ իրադրության մեջ գերադասել էին ծառայել օտար երկրում, քան թե գլուխ խոնարհել Խլաթի թագավորների առաջ: Սասունում մենք այդ երկու եղբայրների անունը լսում ենք այն ժամանակ, երբ մեռնում էր (1185 թ.) Սուկման II Երկարակյացը:

Հայ պատմագրության մեջ այս երկու եղբայրների անվան հիշատակումներ պահպանվել են նաև այն եղերական մահվան կապակցությամբ, որ նրանք գտան Կիլիկիայում: Միխայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն հին կիլիկյան թարգմանության մեջ էլ, հասկանալի պատճառներով. ոչինչ չի պահպանվել նրանց մասին: Սակայն Շաբոյի ֆրանսերեն թարգմանության մեջ պարզ ու որոշակի ասված է, որ անտուն մնացած այդ իշխաններից Շահնշահը, Խլաթ ժամանելուց առաջ, անգամ փորձել էր իր քեռուց՝ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսից, խլել Հռոմկլան: Այդ բախտախնդրությունը մի փոքր էր մնացել, որ շատ թանկ նստեր Հռոմկլային, և հայոց կաթողիկոսարանն ընկներ թուրքերի ձեռքը: Միխայել Ասորու մոտ կարդում ենք՝ «Հայոց կաթողիկոս Գրիգորը (Տղան)... դուրս եկավ Հռոմկլայից և գնաց Տարսոն: Նրա քրոջ որդին, որի անունը Շահնշահ էր, ապստամբեց նրա դեմ. նրան աջակից հանդիսացան թուրքերը և քիչ մնաց, որ քաղաքն ընկներ թուրքերի ձեռքը: Սակայն կաթողիկոսը լուրն առնելով, շտապ վերադարձավ, զորաժողով կատարեց և պաշարեց բերդը: Սպանվածների թիվն ավելացավ, և կաթողիկոսի մարդկանցից մի բանիսը մեռան մարտում... Այնուհետև նրա քրոջ որդին (ո՞ր որդին—Հ. Ռ.) վրա հասավ իր երկրից և բազմաթիվ խոստումներից, հանդիսավոր երդումներից ու պարտավորություններից հետո, որ ստանձնեց պատրիարքը, ինչպես նաև երաշխիք տալուց հետո, նրանք, վերջապես, տեսնվեցին ու հաշտվեցին»[9]:

Կաթողիկոս Գրիգոր Տղան կարողանում է հաշտվել իր քրոջ որդիների հետ և նրանց ուղարկել Սասուն, որտեղ նրանց մյուս ազգականները, նեղվելով մրվանյան քրդերից, 1165 թ., ինչպես ասել ենք, կամովին ընդունել էին Շահ-ի-Արմենի գերիշխանությունը: Անհող ու անտուն մնացած երկու եղբայրները, հավանաբար, որոշ քանակությամբ հետևորդներով, որ զորք էր նշանակում այդ օրերին, մուտք ունեին անգամ շահի պալատում:

---

[9] Chabot. Հատ. 3, էջ 395:

* * *

1189 և հետագա մի քանի տարիները շրջադարձային, բեկումնային հույժ կարևոր ժամանակաշրջան էին ոչ միայն Կիլիկիայի հայկական թագավորության, այլև բովանդակ Մերձավոր Արևելքի և քրիստոնեական Արևմուտքի համար։ Երկու տարի առաջ, 1187 թ., Սալահեդդինին հաջողվել էր գրավել Երուսաղեմը՝ Արևմուտքի և Արևելքի բոլոր քրիստոնյա ժողովուրդների ղըլխավոր սրբավայրը։ Երուսաղեմի անկման բոթը շարժման մեջ էր դրել իր ժամանակի հզորագույն քրիստոնեական եկեղեցին։ Երուսաղեմը ետ գրավելու համար սկսված խաչակրաց երրորդ արշավանքը (1189—1192 թթ.) նախորդ և հետագա խաչակրաց բոլոր արշավանքներից տարբերվում է նրանով, որ երրորդ արշավանքին մասնակցողների թվում չէին գերակշռում առանձին քարոզիչների կոչով ոտքի ելած հասարակ մարդիկ ու ասպետներ, ինչպես նաև այդ ասպետների կազմակերպած առանձին միաբանություններ, այլ Արևմտյան Եվրոպայի երեք խոշորագույն միապետները (Անգլիայի Ռիչարդ Առյուծասիրտ թագավորը, Ֆրանսիայի Ֆիլիպ Օգյուստ թագավորը և Գերմանա-հռոմեական սրբազան կայսրության կայսր Ֆրիդրիխ Բարբարոսան)։

Միջերկրականի արևելյան ափին խաչակիրների նախընթաց հարյուրամյա (1099—1187 թթ.) տիրապետությունը գրգռել էր նոր Եվրոպայի առաջին աշխարհակալների ախորժակը, և եթե վեճ կարող է լինել առաջին երկու արշավանքների բնույթի մասին, ապա երրորդ արշավանքը բացահայտորեն նվաճողական արշավանք էր, և Ֆրիդրիխ Բարբարոսան (Շիկամորուս), որի ճանապարհը պետք է անցներ Հայկական Կիլիկիայի վրայով, ամենևին չէր թաքցնում, որ ինքը հռոմեական նախկին կայսրերի ժառանգն է և իրավունքներ ունի մինչև Եփրատ և ավելի հեռուներն ընկած հողերի նկատմամբ։

Խաչակրաց երրորդ արշավանքի դեմ-հանդիման Սալահեդդինին հաջողվում է կոնսոլիդացնել Սիրիայի, Անդրհորդանանի, Եգիպտոսի, Հիջազ-Եմենի և Արևմտյան Միջագետքի մահմեդական ժողովուրդներին և, հաշտություն կնքելով Երուսաղեմին սպառնացող Ռիչարդ Առյուծասիրտ թագավորի հետ, իր ուժերը կենտրոնացնել Անտիոքի քրիստոնեական դքսության և Հայկական Կիլիկիայի սահմանագլխին։ Հայկական Կիլիկիայի տեր Լևոնին վիճակված էր թագավոր օծվելու (1198 թ.) նախօրյակին (1189—1192 թթ.) մեծ փորձության ենթարկվել։ Նրա թշնամիներն այլևս թուլացած Բյուզանդիոնը, հեղհեղուկ Իկոնիան և հարևան անհանգիստ խաչակիր ասպետները չէին, այլ երկու ահավոր թշնամիներ Ֆրիդրիխ Բարբարոսան և Սալահեդդինը, որոնցից յուրաքանչյուրի հաղթանակն էլ մահ էր նրա անկախության համար։ Կիլիկիայի անառիկ լեռներին ապավինած Ռուբինյանները մինչև այժմ մեծ մասամբ ճարպիկ խուսանավումով էին կարողացել այս կամ այն կերպ և այս կամ այն չափով պահպանել իրենց անկախությունը։ Այժմ հարկավոր էր ավելի մեծ չափով լարել իրենց բոլոր ուժերը։ Սակայն Ռուբինյանները, որպես տոհմ, հյուծվել և ուժասպառ էին եղել։ Թեև Անտիոքի քրիստոնեական դքսության թշնամի՝ նրանք սերտաճել էին այլ խաչակիրների հետ, որոնց առանձին միաբանությունները բերդեր ու հողեր ունեին նաև նրանց հողերում։ Այդ հանգամանքը և առանձին խաչակիրների հետ ունեցած երկարատև շփումները բացասաբար էին անդրադարձել Ռուբինյանների ազգային դեմքի վրա։

Այդ մեծ փորձության ժամին, երբ ազգային դեմքը չկորցրած հայ իշ-

խանները դժգոհ էին Ֆրանկների առաջ տեղի տվող Ռուբինյաններից, դրությունը փրկելու համար հարկավոր էր վարել նոր քաղաքականություն։ Եվ 1187 թ. իշխանությունն իր ձեռքը վերցրած Լևոնը դիմում է նոր քայլի։ Ամենից առաջ նա բարեկամանում է ամենայն հայոց կաթողիկոսության հետ, որն ավելի քան մեկ դար թեև դարձել էր Պահլավունիների տան սեփականությունը, բայց, ինչպես այդ տան հնության և անվանիության, այնպես էլ նրա տված իրոք մեծ կաթողիկոսների հեղինակության շնորհիվ, համահայկական անուն էր վաստակել։ Հայկական Կիլիկիայի համար այդ օրհասական փորձության տարիներին Տղա մականվանյալ Գրիգոր Պահլավունի կաթողիկոսը (1173—1193 թթ.) իր Հռոմկլայում նստած (որ Սալահեդդինի հողն էր) դառնում է Լևոնի, մեր օրերի արտահայտությամբ ասած, արտաքին գործերի մինիստրը։ Գրիգոր Տղա կաթողիկոսը կապվում է ինչպես Ֆրիդրիխ Բարբարոսայի, այնպես էլ Սալահեդդինի հետ։ Եվ առայժմ անլուծելի մնացած այն վեճը, թե որի՞ կողմն էր նրա «համակրանքը», ապացուցում է, թե Պահլավունի կաթողիկոսը որքա՞ն շրջահայաց էր և ինչպիսի՞ վարպետությամբ էր վարում Լևոնի արտաքին գործերը։ Փաստ է, որ ո՛չ Ֆրիդրիխը և ո՛չ էլ Սալահեդդինը էական վնաս չհասցրին փոքրիկ Հայկական Կիլիկիային։

Այդ հակամարտությունների, այդ իմաստուն և ճկուն խուսանավման տարիներին (1189—1192 թթ.) Պահլավունի կաթողիկոսին հաջողվում է նաև լուծել Ռուբինյանների մահացող տոհմը վերակենդանացնելու հարցը։ Սասունից Կիլիկիա ապավինած Հեթում և Շահնշահ Սասունցիները, որոնք Պահլավունի կաթողիկոսի քրոջ որդիներն էին, իսկ հայրական գծով համարվում էին Զորտուանել-Թոռնիկ Մամիկոնյանների շառավիղներ, միակ հարմարագույն փեսացուներն էին արու զավակ չունեցող Ռուբինյան տան համար, որոնք կարող էին գահաժառանգին օժտել միաժամանակ Ռուբինյաններից, Պահլավունիներից ու Մամիկոնյաններից սերված լինելու հմայքով։ Լևոնն ինքն այդ ժամանակ դեռևս սերունդ չուներ (նա իր առաջին կնոջը վանք էր քշել կամ մեռցրել և դեռևս չէր փեսայացել Կիպրոսի Լուսինյաններին)։ Սասունից եկած անվանի հերոսներին Լևոնը սիրով ամուսնացնում է իր եղբոր՝ Ռուբենի դուստրերի հետ։ Տասներկուամյա Ալիսին կնության է տալիս Հեթումին, իսկ հինգամյա Փիլիպինեին նշանում է Շահնշահի հետ։ Երկու եղբայրներին տալիս է կարևոր բերդեր։

Սակայն շուտով իրադրությունը փոխվում է։ Ֆրիդրիխ Բարբարոսան մեռնում է 1192 թ., իսկ Սալահեդդինը՝ 1193 թ.։ Այս երկու ահարկու թշնամիների մահը քայքայում է նաև նրանց բանակները։ Սալահեդդինի որդիների և եղբոր միջև պայքար է սկսվում ժառանգության համար, իսկ Բարբարոսայի կազմալուծված բանակը ետ է դնում։ Կիլիկիայի համար վերականգնվում է նախկին իրադրությունը։ Եթե երեկ Լևոնը վախենում էր, որ գերմանացիները կարող էին գրավել իր ամբողջ երկիրը և իրեն զրկել բոլոր հողերից, ապա այսօր այդ վախն այլևս չկար։ Նրա սահմանների մոտ մնում էին միայն «ֆրանկները»՝ Կիպրոսի Լուսինյանները, որոնց փեսան էր դառնալու ինքը, և Անտիոքի դքսությունը, որի հետ պետք էր լեզու գտնել՝ Սալահեդդինի տրոհված և արդեն իրար թշնամացած ժառանգորդների դեմ միասնական ճակատ կազմելու համար։ Լևոնին այլևս պետք չէին ո՛չ Պահլավունի Գրիգոր Տղա կաթողիկոսը՝ իր համահայկական մեծ հեղինակությամբ, ո՛չ էլ նրա քրոջ որդիները՝ իր տան ժառանգորդին հայկական հին նախարարական անու-

նով զարդարելու համար։ Այս նոր իրադրության մեջ Լևոնն ամենից ավելի նպատակահարմար է համարում խնամական կապերով կապվել իր վաղեմի թշնամիների՝ Կիպրոսի Լուսինյանների և Անտիոքի դքսի հետ, որպեսզի այդ երկու տների ապագա ժառանգորդին հաջողվեր Անտիոքի դքսությունը միաձուլել Կիլիկիային. Այս որոշումը կայացնելուց հետո Լևոնը 1193 թ. ձերբակալում ու բանտարկում է Թագավորական տան Պահլավունի-Մամիկոնյան փենսաներ Հեթում և Շահնշահ եղբայրներին։ Պետք է ենթադրել, որ Լևոնի այս նոր քաղաքականությունը անհայտ չէր մնացել ո՛չ Սասունցի եղբայրներին, ո՛չ էլ Կիլիկիայի հայ ֆեոդալներին, որոնց համակրանքը երկու եղբայրների կողմն էր, և որ նրանք իրենց դժգոհությունը որևէ կերպ արտահայտել են։

Գրիգոր Տղա կաթողիկոսը Հռոմկլայից անձամբ ժամանում է Կիլիկիա՝ իր բարձր հեղինակությամբ ինչպես իր քրոջ որդիներին փրկելու, այնպես էլ, հավանաբար, Լևոնի ոչ ազգային գծի վրա ազդելու համար։ Սակայն Լևոնը ձերբակալում է նաև կաթողիկոսին և մեկ ամսում երեքին էլ միասին սպանում է (1193 թ.)։ Դրության տեր դարձած Լևոնի դիտությամբ, թե՞ նրա կամքին հակառակ, հայրապետական աթոռին նստում է մի իսկական տղա՝ պատանի Վահրամը, որն օծվում է Գրիգոր Ե անունով (1193—1194 թթ.)։ Լևոնը կարծում էր իրեն ենթարկել և հլու-հնազանդ գործիք դարձնել պատանի կաթողիկոսին, սակայն երբ տեսնում է, որ պատանին Թագավորին ենթարկվելու նշաններ ցույց չի տալիս, ապա նա անմիջապես, կղերականների հագուստով ծպտված զինվորների մեծ խմբով Հովհաննես եպիսկոպոսին ուղարկում է Հռոմկլա։ Լևոնը գերում է իրեն չենթարկվող կաթողիկոսին և գահավեժ բարձունքից ցած նետելով սպանում է նաև նրան, որից հետո անհեթեթ առասպել է հնարում, թե իբր կաթողիկոսի կողմնակիցները նրան գրել ու խորհուրդ էին տվել կտավով կախվել ու ցած իջնել բանտ-բերդից, և իբր թե կտավը կտրվել է ու կաթողիկոսը «քարավէժ» է եղել։ Այսպիսով, Լևոնն սպանում է նաև Պահլավունի նորընտիր պատանի կաթողիկոսին (1194 թ.), որն իր եղերական մահվան կապակցությամբ հայոց պատմության մեջ հայտնի է «Քարավէժ» անունով։

Սակայն Պահլավունիների տան հոգևորական ու աշխարհիկ անդամների հետ այս դաժան հաշվեհարդարը դեռ չավարտած, Լևոնը Հեթումի կնոջը՝ Ալիսին, որն արդեն 16-ամյա էր դարձել, կնության է տալիս իր նախկին թշնամու՝ Անտիոքի Բոյեմունդ իշխանի որդուն, պայման կապելով, որ այդ ամուսնությունից ծնված Ռայմոնդ-Ռուբենը միաժամանակ լինի նաև իր՝ Լևոնի գահի ժառանգորդը։

Կիլիկիայի պատմագիրը բարվոք է համարում լռություն պահպանել այդ սպանությունների դրդապատճառների մասին։ Նա սոսկ արձանագրում է փաստը. «Մեռան և մեծ իշխանք՝ քոյրորդիքն կաթողիկոսին, պարոն Հեթում և պարոն Շահնշահ, ի մէկ ամիս՝ քեռին և քոյրորդիքն։ Եւ զոր լուաք վասն մահուան չկարեմ աստ գրել, զի ասէն թէ պարոն Լևոն եղև պատճառ, այլ Աշմարիտն Աստուած գիտէ»[10]։

Սամվել Անեցու ժամանակագրության շարունակողը թեև, ըստ երևույթին, որոշ բան կրկնել և զուցե խառնել է, սակայն նա որոշակի գիտե, որ

10 «Մատեան Սպարապետի, եղբօր Հեթմոյ առաջնոյ արքայի Հայոց պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլսոյ և Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակացն», Մոսկվա, 1856, էջ 106։

Գրիգորիս Ե կաթողիկոսը բռնվել-տարվել է Կիլիկիա և Կիլիկիայում է ինքնասպանություն գործել. «Տէր Գրիգորիս միւս այլ եղբորորդի նորին տեառն Ներսիսի ամս Բ և քարավէժ լէալ ի դղեկէն Կոպիտառոյ՝ և կայ ի Դրազարկն հանգուցեալ»[11]։

Պահլավունիների տան երկու հոգևորական և երկու աշխարհիկ ականավոր ներկայացուցիչների այդքան եղերական վախճանը, հավանաբար իրենց այլ չհիշատակված հետևորդների հետ միասին, մեծագույն աղետ էր այդ տան ողջ մնացած մյուս ներկայացուցիչների համար, որոնք, ըստ արաբ պատմագրի վկայության, «կային Խլաթի կողմերը միայն»։ Նրանք չէին կարող հայոց թագավորի ձեռքով կատարված այդ ոճիրը «որդեսպանություն» չորակել, ինչպես նաև չէին կարող այդ ոճրագործությանը մասնակից չհամարել խաչակիրներին, քանի որ իրենց մեծ իշխանի կնոջն անմիջապես ամուսնացրել էին «պապի Ֆրենկի» զորապետի որդու հետ։ Անկախ այլ, թեկուզ շատ ավելի զորեղ դրդապատճառներից, սոսկ այս մեկ փաստը՝ իրենց իշխանին սպանելու և նրա կնոջն անհապաղ խաչակրի հետ ամուսնացնելու փաստը, ողջ մնացած Պահլավունիներին, որտեղ էլ որ նրանք գտնվելիս լինեին, անհուն ատելությամբ պիտի լցներ խաչակիրների դեմ, որովհետև նրանք չէին կարող կապ չտեսնել այդ սպանությունների և այդ ամուսնության միջև։

Այս եղեռնագործությունը չէր կարող դրի չառնվել Պահլավունիներին համակրող պատմագիրների կամ ուղղակի Պահլավունիների ողջ մնացած զարմերի կողմից։ Խոսելով Գրիգոր Տղա Պահլավունի կաթողիկոսի վախճանի մասին, Սամվել Անեցին (կամ նրա «Ժամանակագրությունը» շարունակողը) պարզ ու որոշակի ասում է.

«Իսկ այլք ի պատմագրաց ասեն, թէ նա գնաց ի Հռոմկլայէն՝ ի Սիս առ ի թափել զբուերորդի իւր Հեթում, զոր կապեալ էր թագաւորն Լևոն, և մեռանի անդէն՝ ի Սիս՝ ի սուրբ Խաչատոր, զոր ուխտ Արքակաղնին ասեն»[12]։

Այս վկայությունն անվիճելի է դարձնում, որ Պահլավունիների եղերական վախճանը, այս որդեսպանությունը, ո՛չ միայն դրի է առնվել, այլև գրի է առնվել անմիջապես, դեպքերի թարմ տպավորության տակ, այն էլ մի քանի հեղինակների կողմից, դեռևս XII դարի վերջին տասնամյակում։ Այս «այլք ի պատմագրաց» երկերը մեզ չեն հասել[13]։

Ռուբինյանների պատմագիր Սմբատ Սպարապետը ծնվել է 1203 թ., այսինքն՝ վերոհիշյալ դեպքից շուրջ տասը տարի հետո, իսկ իր «Պատմությունը» գրել է, հավանաբար, 1250—1260-ական թթ., այսինքն՝ այդ օրերից ավելի քան կես դար հետո. նա չի հիշատակում այդ անցքերի պատմության գրված լինելը և չի տալիս այդ «այլք ի պատմագրաց» անունները, սակայն նա նույնպես գիտե ամեն բան, գիտե Ռուբինյանների մեղավորությունը, բայց նույնպես հարկ է համարում լռություն պահպանել։ Նրա օրով «այլք ի պատմագրաց» պատմությունները արդեն պատմվում էին որպես անգիր բանա-

---

11 «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաբաղ արարեալ», էջմիածին, 1893, էջ 143։

12 Նույն տեղում, էջ 144։

13 «Հայապատումի» մեջ (էջ 35) Ալիշանի բերած հատվածը հավանաբար այդ երկերի մեկ հասած ֆրագմենտներից մեկին է։ Վարդան Արևելցու և Վարդան Բարձրբերդցու շփոթություն առաջ բերած նույնանման հատվածները նույնպես հավանաբար այդ երկերի պատառիկներից են, որոնք մտել են հիշյալ հեղինակների երկերի մեջ։

հյուսութիւն, «զոր լուամ վասն մահուան (ինչ որ լսեցինք մահվան մասին) չկարեմ աստ գրել»: Կարևորն այստեղ նրա «ինչ որ լսեցինքը» չէ, այլ այն, որ կես դար հետո նա արդեն չի կարդացել, այլ միայն լսել է։ Պահլավունիների տան հեքիաթային վերելքի և եղերական վախճանի վեպն արդեն հյուսվել էր։

Սամվել Անեցու հիշատակած «այլք ի պատմագրաց», այս անցքերից բացի, ամենայն հավանականությամբ, խոսել են Եդիպտոսի մասին, որտեղ այնպես բարձրացան Պահլավունիների տան աշխարհիկ անդամների և նրանց հետ սերտաճած այլ տոհմերի ներկայացուցիչները, այնուհետև, եգիպտահայ դաղութի անկման, ինչպես նաև Խլաթ-Սասունի վրա Սալահեդդինի կատարած արշավանքի՝ Պահլավունիների ղեկավարությամբ սասունցիների վրեժխնդրության մասին. նրանք խոսել են Սասունցի եղբայրների Կիլիկիա կատարած անցման և խաչակիրների մասին, որոնք Պահլավունիների տան խորտակման հիմնական պատճառը հանդիսացան։

Պետք է ընդունել, որ Պահլավունիների տան կործանման պատմությունը, որ գրել են «այլք ի պատմագրաց», չէր կարող հենց սկզբից օժտված չլինել վիպային տարրերով, մանավանդ որ այդ տան շուրջ մեկ դար տևած իրոք զարմանալի, իրոք հեքիաթային գործունեությունը Նեղոսի ափերից մինչև Սասուն և Հռոմկլայից մինչև Նուբիայի սահմանագլխին գտնվող հայկական ձերմակ վանքերը, ուրիշ կերպ չէր էլ կարող ընկալվել այդ «այլք ի պատմագրաց» կողմից, քան վիպային երանգով։ Այս թեզի ճշտությունն ընդունելու համար պետք է մի պահ փոխադրվել ամենայն հավանականությամբ ոչ թե մենավոր Հռոմկլան,— որտեղ Գրիգոր Ե Քարավեժից հետո չէին կարող մնալ Պահլավունիների տան անդավաճան զարմերն[14] ու կողմնակիցները,— այլ Շահ-ի-Արմենների երկրի Ս. Առաքելոց (Ղազարի) վանքը, որտեղ միայն կարող էին ապավինել նրանք և որտեղ իրոք ապավինել էին ըստ իրազեկ Յակուտիի վկայության։ Հեղինակների տարբեր անձ լինելը («այլք ի պատմագրաց») և տարբեր մոտեցում ունենալը, ինչպես նաև նրանց պրիմիտիվ մտածողությունը, հարյուրամյա ծավալուն պատմության նյութերը հավաքելու աղքատիկ հնարավորությունները, ուժեղների զայրույթը չգրգռելու համար այլաբանությունների դիմելու անհրաժեշտությունը, կենդանի մնացած ծերունիների պատմածներին ակամա հավատ ընծայելու անխուսափելիությունը, անտարակույս, հենց սկզբից վեպ են դարձրել նրանց գրած պատմությունները։ Ինչպես պետք էր ենթադրել, և, ինչպես վկայում են Սմբատի «զոր լուաքը» և Միխայել Ասորու «Ժամանակագրության» դիտումնավոր աղավաղումները, այդ կրճատումներն ու աղավաղումները մտցնելու նոր իրադրությունն ու պահանջը, «այլք ի պատմագրաց» երկերը

---

14 Ինորոշ է, որ այս եղեռնագործությունից հետո Լևոն Բ-ն առերևույթ չխախտեց ավանդույթը և կաթողիկոսական աթոռը չխլեց Պահլավունիներից, սակայն այդ աթոռին նստեցրեց իր համար շատ հարմար թեկնածուի, նույն Պահլավունիների տնից մի մարդու, որը երիտասարդ հասակում իր կյանքը Պոլսում մաշելուց հետո, հայրենի տուն՝ Հռոմկլա էր վերադարձել ու կրոնավոր դարձել միայն իր հորեղբորորդի Գրիգոր Տղա կաթողիկոսից հարուստ թեմեր (Տարսոն, Լամբրոն, Անտիոք, Կեսարիա) ստանալու պայմանով։ Այս զվարճասեր կրոնավորի հետ Լևոն Բ-ն կարող էր լեզու գտնել և գտավ։ Գրիգոր Զ անունով հայտնի այս կաթողիկոսը (1194—1203) ամեն քայլափոխում համակերպվում և ընդառաջում էր Լևոն Բ-ին։

չէին կարող երկար ժամանակ գրավոր ձևով պահպանել իրենց անաղարտ գոյությունը, դրանք կարող էին պատմվել միայն բերանացի։ Իսկ բերանացի պատմվելու դեպքում արդեն վիպային երանգներով գրված իրական պատմություններ հեշտությամբ կարող էր վերածվել վեպի։

ВОЗВЫШЕНИЕ И ПАДЕНИЕ ПАХЛАВУНИДОВ В XI—XIII ВЕКАХ

Л. Г. ТУРШЯН

(Резюме)

После нашествия сельджуков, в период переселения армян на запад, находившийся в Каппадокии Вахрам Пахлавуни, сын прославленного философа Григора Магистроса, при поддержке Багратидов и Арцрунидов стал католикосом всех армян под именем Григора Вкайасэра.

Престол новоизбранного католикоса долго кочевал по армянским монастырям в горах Аманоса, пока, наконец, не обосновался в Ромкла, на северо-западной границе Киликии, где тогда взяли верх враждебные Пахлавунидам армянские Рубениды. Породнившись с сасунскими Мамиконидами и обосновавшимися в горах Аманоса Апиратами, Пахлавуниды укрепили свое положение.

По приглашению одного из Фатимидских халифов католикос Григор Вкайасэр посетил Египет. Вслед за ним и часть Пахлавунидов переехала в Египет и обосновалась на юге страны по соседству с тогда еще христианской Нубией. Укрепившись там, они организовали армянское войско и поставили его на службу Фатимидам.

В 1172 г. Иусуфу бин Эйубу (будущему султану Салахэддину) удалось низвергнуть последнего Фатимида и разгромить армянское войско, остатки которого во главе с Василом и Шахиншахом, племянниками католикоса Григора Тха (Отрока), вернулись в Сасун.

В период третьего крестового похода разумному политику католикосу Григорию Тга удалось спасти Армянскую Киликию от верной гибели, примирив враждовавшие дома Рубенидов и Пахлавунидов, переженив своих бездомных племянников на принцессах из дома Рубенидов. Однако после смерти Фридриха Барбаросы и Салахэддина (1193 г.), когда миновала угроза Киликии и с запада, и с востока, Рубениды вновь вспомнили свою вражду с Пахлавунидами и в течение одного месяца убили и нежеланных зятьев, и подоспевшего на помощь племянникам католикоса Григора Тга (1194 г.). Новоизбранного же его преемника, семнадцатилетнего католикоса Григора V, они сбросили вниз с горы. Так, в 1206 г. угас древний род армянских Пахлавунидов.